

Վերառարկայական թեմա՝ Մոլորակը մեր ընդհանուր տունն է:

Վեներոնական գաղափար՝ Բնական էկոհամակարգերն ամբողջություն են:

## Վերջնական գնահատման առաջադրանք

### Հարցեր, որոնցից կարող ես օգտվել հեքիաթը կամ պատմությունը հորինելիս

- ✓ Ո՞ր բնական էկոհամակարգում է տեղի ունեցել, ինչո՞ւ:
- ✓ Ո՞ր բույսերը կամ կենդանիներն են հերոսները:
- ✓ Ի՞նչն է վտանգված ու ի՞նչ վատ բան կարող է լինել:
- ✓ Ինչպե՞ս կփոխես այդ իրավիճակը:
- ✓ Ո՞վ է քո հեքիաթի/պատմության բարի հերոսը:
- ✓ Ի՞նչպես է նա օգնում, ազատում մյուսներին վտանգից:
- ✓ Ինչպե՞ս է փոխվում ամեն ինչ քո հեքիաթի վերջում:
- ✓ Նկարի՞ր քո հեքիաթի բարի ավարտը:

ՀՐԴԵՀ ԱՆՏԱՌՈՒՄ  
Հեղինակ՝ Վահե Հակոբյան

Լինում է, չի լինում՝ մի փնթի տղամարդ է լինում: Նա ապրում էր անտառում: Մի օր սովորականի պես նա ծխում էր անտառում, երբ ծխախոտն ընկավ ձեռքից: Նա ուներ բարձրացնելով ասաց.

-«Ի՞նչ կարող է պատահել, գնամ տուն»: Առավոտյան, երբ նա արթնացավ, ծխի հոտ զգաց: Դա հրդեհ էր, որն առաջացել էր ծխախոտի պատճառով: Ծուխը մարդու տեսք ստանալով ասաց.

-«Եթե կրակը չհանգցնես, այն քեզ նույնպես կհասնի»:

-«Ա-ա՛ -ա», - գոռալով դեպի անտառի խորք շտապեց նա: Երբ հասավ անտառի խորք, նրա չորս կողմն արդեն կրակ էր: Բարեբախտաբար, մոտակայքում կար մի խելացի նապաստակ, որը փոս փորեց: Դուք կհարցնեք՝ ինչո՞ւ: Նապաստակը փորված փոսի ավազը լցրեց հրդեհի վրա և հանգրեց կրակը: Այդ իրավիճակը չկրկնելու համար տղան որոշեց ավելի ուշադիր և հոգատար լինել իրեն շրջապատող միջավայրի նկատմամբ:

